600.0302.02.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 սեպտեմբերի 2020 թվականի №302Ա
քաղ. Երևան

«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի սեպտեմբերի 15-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №202Ա որոշմամբ «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է 463.975/453.975ՄՀց, 465.225/455.225ՄՀց, 466.475/456.475ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման №0019 թույլտվությունը,

բ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2020 թվականի օգոստոսի 3-ի №04/11.1/4129-2020 գրությամբ Հանձնաժողովին տեղեկացրել է 462.900-467.100ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում արձանագրված՝ Ընկերությանը պատկանող «CDMA» ռադիոհեռախոսային կապի համակարգի 4.2ՄՀց շերտով ազդանշանների մասին՝ միաժամանակ խնդրելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն ձեռնարկելու միջոցներ նշված խախտումը վերացնելու ուղղությամբ,

գ) Հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել Ընկերության նկատմամբ՝ ռադիոհաճախականությունների օգտագործման №0019 թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2020 թվականի օգոստոսի 10-ի №ՍՇ/34.2-Մ2-9/3357-2020 գրությամբ,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2020 թվականի օգոստոսի 14-ի №00237/20-И11 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ 0.45ՄՀց շեղումը պայմանավորված է եղել միջին հաճախականության հաշվարկի սխալմունքով, և ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ծրագրային ապահովումը համապատասխանեցվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0019 թույլտվության պայմաններին, ինչի արդյունքում 2020 թվականի օգոստոսի 12-ից սկսած Ընկերությանը պատկանող ռադիոսարքավորումները 450ՄՀց ռադիոհաճախականության տիրույթում օգտագործում են 2x3.75ՄՀց ռադիոհաճախականության շերտը, և խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը,

ե) Հանձնաժողովը 2020 թվականի օգոստոսի 18-ի №ՍՇ/34.2-Մ2-9/3492-2020 գրությամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, իր կողմից հարուցված վարչական վարույթի համար էական համարվող հանգամանքները պարզելու նպատակով դիմել է Նախարարություն՝ փոխօգնության կարգով ստանալու Ընկերության կողմից 450ՄՀց ռադիոհաճախականության տիրույթի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն,

զ) Նախարարության 2020 թվականի օգոստոսի 26-ի №04/11.1/4582-2020 գրությամբ Հանձնաժողովը տեղեկացվել է, որ 462.900-467.100ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում իրականացված հետազոտումների արդյունքում շեղումներ չեն արձանագրվել,

է) Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների կասեցման և դադարեցման կարգը հաստատելու մասին» №231Ն որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-7-րդ կետերով նախատեսված դեպքերում թույլտվությունը, օրենքով կամ Հանձնաժողովի որոշմամբ այլ ժամկետ նախատեսված չլինելու դեպքում, կասեցվում է մինչև խախտման պատճառի վերացումը,

ը) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերության ձեռնարկած միջոցների արդյունքում ռադիոհաճախականություններն օգտագործվում են թույլտվության պայմաններին համապատասխան, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ ռադիոհաճախականությունների օգտագործման №0019 թույլտվության պայմանների խախտման համար 2020 թվականի օգոստոսի 10-ին հարուցված վարչական վարույթը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
2 սեպտեմբերի 2020թ.